

ՄԵՏԱՄՈՐՓՈՋԱ

Ողբերգական կատակերգութիւն մի արարուածով և երեք տեսարանով.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Դանեմարկի իշխան Համլէտի դերն եւ ուրուականը
Տիկին Սիրանոյշ, հայ դերասանուհի.
Փիզարո.
Մարգարիտ Գոթիէի դերը.
Սեղրակեան, հայ դերասան.
Համլէտի ծառան.

ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

Համլէտի առաջնաստիճակը. մտնում է ծառան:

Ծառայ. Տէր, տիկին Սիրանոյշը ձեզ հետ խօսելու իրաւունք է խնդրում:

Համլէտ. Ո՞վ է այդ Սիրանոյշը:

Ծառայ. Չգիտեմ, իշխան: Ինքը ասում է, որ դերասանուհի է:

Համլէտ. Հրաւիրի՛ր. (ծառան հեռանում է. մտնում է տիկին Սիրանոյշը եւ իսկոյն ռէվէռանս անում. յետոյ մօտենում է իշխանին, սեղմում ձեռք եւ ժպտալով նորից ռէվէռանս անում):

Սիրանոյշ. Ողջոյն ձեզ, վսեմափայլ իշխան:

Համլէտ. Ողջոյն ձեզ, տիկին. սակայն ներեցէք, պատիւ չունիմ ձեզ ճանաչելու:

Սիրանոյշ. Ե՛տա եմ զարմանում, իշխան. ամբողջ հայ ազգը ինձ ճանաչում է, իսկ դուք—ո՛չ:... Ես այժմեան հայ-

հական՝ բեմի ամենապայծառ աստղն եմ: Սէրս է անոյշ... եկել եմ սրտիս խորհուրդը ձեզ յայտնելու...

Համիլէտ (վախճնաւուով որ Սիրանոյշը իւր սրտի սէրը պիտի յայտնէ): Առանց այն էլ հոգիս տառապում է դառնազան գաղտնիքներից և սիրոյ արտայայտութիւններից...

Սիրանոյշ: Ո՛չ, իշխան, գաղտնիքս խորհրդաւոր է և հաճելի պիտի լինի ձեզ. ես չեմ եկել սրտիս սէրը ձեզ յայտնելու, թէ՛ պէտ, ճշմարիտն ասած, անչափ սիրում, համակրում եմ ձեզ... Բայց, իշխան, եթէ կը հրամայէք, գաղտնիքս կ'յայտնեմ:

Համիլէտ: Եթէ գաղտնիքդ, ինչպէս ասացիք, նպատակ չունի սրտիդ սէրն յայտնելու, աստուածային այն սուրբ կրակը, որ տղամարդիկ և մանաւանդ կանայք իւրաքանչիւր քայլափոխում ապականում են և կամ վաճառ հանում, ապա խօսեցէք համարձակ. տալիս եմ ձեզ, տիկին, իմ իշխանական խօսքը ձեր խնդիրը կատարելու...

Սիրանոյշ: Թէ՛ պէտ, վեհափայլ իշխան, գաղտնիքս զուրկ չէ գէպի ձեզ տածած համակրանքից, բայց և այնպէս հեռի եմ ձեզ հետ ամուսնական կապ հաստատելու մտադրութիւնից, թէ՛ ե... ան... Բայց սէրս ես ուրիշ կերպ եմ ուզում ցոյց տալ ձեզ:

Համիլէտ: Ո՛հ, տիկին, բուական է, բաւական. ես հրաժարում եմ սիրոյ ամեն մի արտայայտութիւնից: Հաւատացէք, որ հոգիս շարունակ տանջւում է և մաշւում, դարբեր են անցնում, և սակայն տառապեալ հոգիս սիրոյ պէսպէս արտայայտութիւններից տակաւին անդորրութիւն չէ դտնում:

Սիրանոյշ: Սա խնդրում եմ, իշխանական վեհանձնութեամբ լսէք մի համեստ հայ դերասանուհու խնդիրը, որ ձեզանից ոչ փոխադարձ սէր է աղերսում և ոչ էլ մեծամեծ պարագեներ: Սա միայն սոսկ իրաւունք եմ խնդրում...

Համիլէտ (ընդհատելով): Ի՛նչ իրաւունք:

Սիրանոյշ: Այն, որ դուք մօտ անցեալում շնորհեցիք և մի ուրիշ դերասանուհու. ձեր խոնարհ աղախինը նոյնն է աղերսում:

Համիլէտ: Չեմ հասկանում. խօսքերդ խորհրդաւոր են, ախիկին, խնդրում եմ, որ աւելի պարզ խօսէք:

Սիրանոյշ: Իշխան, ձեր թոյլտուութեամբ մօտ անցեալում ձեզ ներկայացրեց մի դերասանուհի. նորա դափնիները ինձ քննել չեն տալիս, այն օրուանից ես հանդիստ չունիմ—գիշեր-

ցերեկ աչքիս առաջ ձեր դիւթիչ չքնաղ պատկերն է: Հայ տիկինը աղաչելով պաղատում է ձեզ գէթ մի անգամ ներկայացնելու իրաւունք շնորհել, որպէս զի ազատուի սիրոյ և հոգեկան տազնապնեղից, որ այն օրից ի վեր տանջում են նորան:

Համլէտ. Ո՛չ, տիկին, դուք սխալուում էք. ես ոչ զբի իրաւունք չեմ տուել և չէի էլ կարող տալ:

Սիրանոյշ. Գուցէ, իշխան, դուք մոռացել էք, որ այդ իրաւունքը շնորհել էիք Սառա Բեռնարին: Գեղարուեստը չունի ո՛չ հայրենիք, ո՛չ ազգութիւն և ո՛չ էլ կրօն,—նա անխտիր բոլոր մարդկան է սեպհականութիւն: Արդ՝ պաղատում եմ հայ դերասանուհիս, որ իշխանական ձեր ողորմութեամբ այդ շնորհը և ինձ անէք, որպէս զի կարողանամ հոգեկան մեծ հաճոյք պատճառել իմ տառապեալ հայրենակիցներին, որ փափազիրով փափագում են խաղիս:

Համլէտ. Այո՛, գիտեմ, լսել եմ այդ դերասանուհու խիզախ վարմունքը: Որքան դուք օժտուած էք լինում աստուածային շնորհքով, այնքան էլ կոպիտ, անբաղաճաւար և յանդուգն են լինում ձեր դործերը: Նա հարկ չհամարեց հաւանութիւնս ստանալ և կարծիքս լսել, ուստի և իւր մօրթութեան արժանի վարձը ստացաւ: Ես գոհ եմ, տիկին, որ դուք կանխապէս դիմում էք ինձ, սակայն ցաւում եմ, որ ձեր խնդիրը պիտի մերժեմ:

Սիրանոյշ. Կրկին ու կրկին ես խնդրում եմ, իշխան, եւ չեմ կամեցում ձեզ հետ այնպէս վարուել, ինչպէս Սառան: Ես ոչ միայն սիրում եմ ձեզ, ոգևորում եմ ձեզանով, այլ և իրովին ըմբռնել, հասկացել եմ ձեր հոգու բոլոր նիւանսները: Սրդուում եմ տաղանդոյս, որ չեմ անպատուիլ, չեմ խայտառակիլ իմ պաշտելի Համլէտ իշխանին:

Համլէտ. Խիզախ, անմիտ դուք տիկին, արիւնս ինչո՞ւ էք վրդովում, ցաւերս նորոգում: Գուք հասկացել, ըմբռնել էք հոգիս, բայց չէք հասկանում, որ կինը երբէք տղամարդ լինել չէ կարող և ընդհակառակը: Աստուած ձեզ պարգևել է մի երես, դարերի ընթացքում նորանից դուք շինել էք երկուսը և այժմ՝ դորանով էլ չքաւականալով՝ երրորդն էք ուզում... Ո՛չ, ո՛չ, անյողողող է խօսքս, հաւանութիւնս ես երբէք չեմ կարող տալ... Բ՛ւռ է, որքան ինձ ծաղրեցին... Գնացէք, մտէք իրաւանոց...

Սիրանոյշ. Եւ դարձեալ կրկնում եմ, որ ճշտիւ ըմբռնե

եմ ձեր հոգին այն երկնաձիր պարզևի շնորհիւ, որով օժտուած եմ ես: Եթէ խնդիրս մերժէք, վստահալ այլ իշխան, ես հանգիստ չպիտի գտնեմ:

Համլէտ. Շատ եմ ցաւում, որ Աստուծոյ պարզևած ձիրքը դուք գործադրել չէք իմանում: Աստուծոյ պարզևները անբնական երևոյթների համար չեն տրւում, այլ բնականը կատարելութեան տիպարին մօտեցնելու, հասցնելու: Այն, ինչ որ դուք էք մտածում, նշանակում է ծաղրել բնականը, վատնել աստուածաշնորհ պարզևը: Ո՛չ, հազար ո՛չ, ես չեմ կարող համաձայնութիւնս տալ, որ մի կին ծաղրէ, անարդէ ինձ: Բաւական է, որքան ինձ տանջեցին և չարչարեցին... Ամէն մէկը, ընտելութիւնի օժտուած լինի նա թէ ոչ, անպատճառ ինձ վերայ է կամենում իւր ոյժը փորձել, կարծես թէ ուրիշ դերեր չկան... Կուսանո՞ց...

Սիրանոյշ. Բայց գիտէք, իշխան, որ ես ամեն մէկը չեմ...

Համլէտ. Այլ ևս ոչ մի խօսք. խնդրեմ, տիկին, ինձ հանգիստ թողնէք: Բայց եթէ մի օր անպատճառ կամենաք ձեր անունը կապել իմ անուն հետ, իմացած եղէք, որ ես այնտեղ մի հաւատարիմ մարդ ունիմ, որ երկար տարիներ և անքուն գիշերներ է նուիրել ինձ,—անշուշտ նա վրէժխնդիր կը լինի... Դնացէք, մտէք կուսաստան...

(Տիկինը զայրացած հպարտ հպարտ դուրս է գնում):

ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Ֆիգարոյի ննջարանը. Նոյեմբերի 20-ի կէս գիշերին:

Համլէտի ուրուականը և Ֆիգարոն:

Ուրուական. Ֆիգարօ, Ֆիգարօ:

Ֆիգարո (սարսափած). Ո՛հ, արհաւիրք, այս ինչ ձայն եմ լսում:

Ուրուական. Մի վախենալ, Ֆիգարօ, ես եմ, քո սիրած Համլէտը՝ Դանեմարքի իշխանը: Միտ առ և լսիր ինձ:

Ֆիգարո. Ո՛վ անմահ ոգի...

Ուրուական. Ո՛չ, չարատանջ և չարաբախտ ոգի... Դաբերի ընթացքում հոգիս միայն հալածւում է, խաղաղութիւն գտնել չեմ կարողանում: Ա՛խ, այս ինչ դաժան պատուհաս է...

Ֆիգարո. Իշխան, ինչո՞ւ համար ես այսօր այդպէս վրը-

դովուած խօսում... Ի՞նչ է պատահել... Ձէ որ կորովամիտ և հանճարեղ մարդիկ քեզ են նուիրում իրենց ժամանակն ու աշխատանքը վեհ հոգիդ ըմբռնելու: Ասան, իշխան, խօսիր, հաւատարիմ ծառար պատրաստ է քեզ լսելու:

Ուրուական. Սա չեմ վրդովում, որ մարդիկ ուսումնասիրում են ինձ, աշխատում են հոգիս ըմբռնել, բայց այլ ես ոյժ չունիմ դիմադրելու այն անարդանքներին, որ անխնայ ինձ հասցնում են:

Ֆիզարօ. Անարդանք...

Ուրուական. Այո, անարդանք և ծաղր ու ծանակ...

Ֆիզարօ. Իշխան, վսեմ ոգի, ես քեզ չեմ հասկանում. աղաչում եմ, պարզ խօսիր անձնուէր բարեկամիդ հետ:

Ուրուական. Նթէ վստահ չի՞նէի անձնուէր մտերմութեանդ, քեզ չէի երևել: Լսիր, Ֆիզարօ, արդարութեան վրէժխնդիր պիտի լինիս:

Ֆիզարօ. Պատրաստ եմ, տէր, բայց ես չգիտեմ, թէ ինչ անարդանքի մասին է խօսքդ:

Ուրուական. Անցեալ գիշեր կէս գիշերին, երբ արդար զայրոյթով լի և վշտացած տուն եկար, ես կամեմու էի գալ քեզ մօտ, բայց խղճացի և վճռեցի բնից քեզ չզրկել, թէպէտ խոստովանում եմ, մի օրով քեզ ուշ երևիլս դժուար էր ինձ համար: Գու աւանատես եղար մի արտակարգ ներկայացման. քս հայրենակից դերասանուհիներից մէկը համարձակութիւն էր ունեցել բեմի վերայ ներկայացնել ինձ, որի պատճառով խռովայոյզ էր հոգիս... Ազնիւ, արդար վրէժխնդրութեան հատուցումը քեզ եմ յանձնում... Խաղաղութիւն տուր տառապեալ հոգուս...

Ֆիզարօ. Հանգստացիր, չարատանջ ոգի, հանդստացիր: Տեսնում եմ, որ սրտիս գաղտնիքները, զայրոյթս քեզ յայտնի են, բայց այս անգամ ես կամեցայ ներողամիտ լինել լոկ ազգասիրական զգացումից դրդուած:

Ուրուական. Ներողամտութիւնն էլ ունի իւր չափն ու սահմանը: Լսիր, Ֆիզարօ, խիզախ տիկնոջ ես զգուշացրի, որ իմ փոխաբէն վրէժխնդիր կլինեն, երբ նա եկաւ ներկայացնելու իրաւունք խնդրելու: Սա նորան մերժեցի, բայց նա ինձ հաւատացնում էր, թէ ճշտիւ ըմբռնել է ոգիս, իսկ ես նորան չկարողացայ համոզել, որ այլ է ըմբռնելը, այլ է արտայայտելը: Գոռոզ կինը չլսեց ինձ և ասածն արաւ: Իշխանական և

առնական պատիւս շօշափած եմ համարում, և դու խստիւ վրէժխնդիր պիտի լինիս...

Ֆիզարո. Չի՞նք թէ, իշխան, մեր Սիրանոյշը քեզ վերաւորեց նորանով, որ չ'հնձած ցորենի պէս անարատ, այս մեղապարտ երկրի քո մաքուր քաւարան Օֆէլիայիդ^ք մի աննշան ընծայ էր տուել, որ պատուաբեր չէր Իանեմաքի իշխանի համար:

Ուրուական. Եւ դո՛ւ, Ֆիզարո... Միթէ միայն այդ նկատեցիր այն երեկոյ... Միթէ այնտեղ նստած դու՞ չէիր մտաբերում միւս հայրենակցիդ ներկայացումները, որ այժմ ինձ հետ է և իմ ու քո սիրելին է: Իւրաքանչիւր քայլափոխում դու չէիր համեմատում... Ո՛չ, Ֆիզարո, ինձ մի ուրանալ. դու լաւ դիտեցիր և բոլոր թերութիւնները լաւ նկատեցիր... Հապա ինչո՞ւ էր վշտացած սիրտդ... Վրէժ եմ խնդրում, վրէժ...:

Ֆիզարո (ծնկաշոր). Ներքի, իշխան, եթէ խօսքերովս խռովայոյզ հոգիդ վշտացրի: Վկայ է երկինքը, որ սէրս անկեղծ է: Աստ, հրամայիր, ինչպէս վրէժխնդիր լինեմ, քննդատութիւն գրեմ:

Ուրուական. Վեր կաց, Ֆիզարո, և ոչ մի յօդուած հարկաւոր չէ: Լսիր ինձ: Եօթանասուն անգամ հարիւր չորս տարի, աւելացրու դորան և արեգակի քառասուն և վեց շրջանի թուով տարիներ և դու կը տեսնես, որ բնութեան օրէնքները անխախտ են մնում արեգակը միայն ցերեկն է լուսաւորում, իսկ լուսինը—գիշերուայ է լապտեր: Ոչ առաջինը նախանձեց երկրորդին, ոչ էլ երկրորդը առաջինին, և շարունակ քոյր-եղբայր մնացին: Դարեր անցան և դարեր կանցնեն, բայց տղամարդը երեխայ չի ծնիլ և կինը երբէք այր մարդ չի դառնար Միայն թերացի Տիրեսիոս, երբ գուգուած երկու օձ տեսաւ և էզն սպանեց, իսկոյն կին դարձաւ. իսկ երբ արեգակը եօթը շրջան կատարեց, և նոյն վիճակում օձերի նա մի ուրիշ գոյգ տեսաւ, շտապեց արուն սպանել, որ նորից տղամարդ դառնայ և իսկոյն դարձաւ: Եւ երբ Դիոսն ու Հէրան վիճեցին, թէ ո՞րն է գերադասելի՝ այր մարդ թէ կին լինելը, Տիրեսիոսին դիմեցին, որ խնդիրը լուծէ, որովհետև երկուսի համն էլ տեսել էր: Ճշմարտախօս այն թերացին, երբ առաւելութիւնը տղամարդուն տուեց, գուշակելու ձիրքով օժտուեցաւ, իսկ գոռոզամիտ այն դիցունհին նորան կուրացնելով վրէժխնդիր եղաւ: Ես ահա զարմանք. ձեր դերասանուհին և ոչ մի անձ չսպանած տղամարդ կամի լինել: Արդ՝ բարեկամ, լուսինը իւր մի շրջանը չբոլորած

վրէժս պիտի հանես, որովհետև գերադասում եմ կոյր տղա-
մարդ լինել, քան նոյն իսկ գեղատեսիլ մի կին: Եւ ոչ մի ըննա-
դատութիւն չի տալ ոչինչ օգուտ, որովհետև կուրացած են
մարդիկ: Լսիր, Ֆիզարօ, որպէս զի համանման երևոյթները ամ-
բողջ անհեթեթութիւնը լիովին, իրականապէս տեսնեն և ըմ-
բռնեն, դու կը դիմես հետևեալ միջոցին, կհամոզես հայրենակից
գերասաններից մէկին բեմ դուրս գալ մի կանացի յայտնի դե-
՛ր ում... Խեղկատակութիւնը աններև կը լինի...

Ֆիզարօ. Պատրաստ եմ, տէր:

Ուրուական. Մնաս բարեաւ, քնիր խաղաղ, շուտով այս
աշխարհս չգաս—այդտեղ դեռ ինձ պէտք կը լինիս: Այլ ևս ոչ
մի խօսք...

(Համլէտի ուրուականը աներեւութանում է):

ԵՐՐՈՐԻ ՏԵՍԱՐԱՆ.

Սեղրակեան գերասանը Մարգարիտ Գօթիէի թուղուարում:

Սեղրակեան (համբուրելով տիկնոջ ձեռքը). Ողջոյն
ձեզ, տիկին:

Մարգարիտ. Բարև տեսայ: Երևի եկել էք շրթունքիցս
մի կամելիա քաղելու:

Սեղրակեան. Եթէ խնդիրս կատարէք, ոչ թէ մի, այլ
քսան և մի վարդ կը քաղեմ:

Մարգարիտ. Խնդրեք... Ինչ խնդրեք ունիք, ասացեք
տեսնեմ: Եթէ հնարաւոր է, ուրախութեամբ կը կատարեմ. այդ
իմ սեպուհ պարտականութիւնն է:

Սեղրակեան. Կատարելու իսկապէս ոչինչ չկայ. պէտք
է միայն ասէք՝ զմա, համաձայն եմ):

Մարգարիտ. Ներեցէք, ես չիմացած ոչինչ չեմ կարող
ասել:

Սեղրակեան. Ես կամենում եմ ձեզ ներկայացրել մի
անգամ հայոց բեմի վրայ և ահա խոնարհաբար խնդրում եմ
ձեր հաւանութիւնը: Վստահ եմ, պաշտելի տիկին, որ այս չըն-
չին խնդիրս չէք մերժիլ:

Մարգարիտ. Դձուք... Ինձ պիտի ներկայացնէք... Հն...
հն... հն... Վայ... կը մեռնեմ... Դուք... Ինձ... պիտի ներկա-
ացնէք... Հն... հն... հն... Պարճն, ձեր խելքը տեղն է թէ
ոչ մոռանում էք, որ տղամարդ էք...

Սեղրակեան. Ո՛չ, չնայսարհիկ տիկին, ես չեմ մոռանում, ես հասկանում եմ, ինչ եմ ասում: Այժմ դա մի նորութիւն է. Սառան և Սիրանոյշը Համլէտին են ներկայացնում, իսկ ձեր խոնարհ ծառան, չկամենալով յետ մնալ նոցանից, ձեզ է ուզում ներկայացնել:

Մարգարիտ. Թէպէտ ընդհանրացած կարծիք է, որ տղամարդիկ կանանցից խելօք են, բայց ես իմ ամբողջ էութեամբս բողոքում եմ այդ վայրենի անմտութեան դէմ...

Սեղրակեան. Ներեցէք, տիկին, դա թնչ անմտութիւն է:

Մարգարիտ. Բարեկամ, դուք բժշկին չէք դիմել:

Սեղրակեան. Տիկին, դուք վերաւորում էք ինձ:

Մարգարիտ. Ո՛չ, ես չեմ վերաւորում, որովհետեւ առողջամիտ մարդը այդպիսի առաջարկութիւն չի անի:

Սեղրակեան. Շատ զարմանում եմ... Ասացէք, խնդրեմ, ինչ արտասովոր բան կայ խնդիրքիս մէջ:

Մարգարիտ. Միթէ ձեզ համապատասխան տղամարդկանց դերեր չկան, որ ինձ էք ուզում ներկայացնել:

Սեղրակեան. Ինչո՞ւ չէ... շատ կայ: Բայց որպէս նորութիւն... որ կարող է մեծ արդիւնք տալ մեզ, ես շատ կը փափագէի ձեզ ներկայացնել:

Մարգարիտ. Հա՛... Գեղարուեստին էք ծառայում թէ արդիւնքին: Լա՛ւ, դիցուք թէ ես յօժար եմ, բայց ինչպէս դուք պիտի ներկայացնէք ինձ: Սրինակի համար՝ ձեր ձայնը բոլորովին կանացի ձայն չէ...

Սեղրակեան. Զարմանում եմ, տիկին: Ի՞նչ նշանակութիւն ունի ձայնը, քանի որ գլխաւորը հոգեկան աշխարհն է: Եթէ կամենաք, ես կարող եմ և կանացի ձայնով խօսել, բայց կրկնում եմ, դա նշանակութիւն չունի, որովհետեւ տղամարդիկ անշուշտ ներողամիտ կը լինեն, իսկ եթէ վերաւորուելու լինին, միայն կանայք, կանանց զգացումները պիտի վերաւորուին...

Մարգարիտ. Ի՞նչ նշանակութիւն ունի ձայնը... Հա՛... հա՛... կանացի անոյշ և մեղոյշ ձայնի փոխարէն ձեր կոշտ ու կոպիտ ձայնը պիտի լսեն... հա՛... հա՛... հա՛... իսկ կանացի նուրբ, քնքոյշ և նազելի շարժումները ինչով պիտի փոխարինէք... Ի հարկէ, դուքա էլ ոչինչ նշանակութիւն չունին... իսկ ամբողջ կանացի էութի՛ւնը... Սա դեռ չեմ խօսում մեր սեռին յատուկ սիրելու ընդունակութիւնների մասին, որ դուք, քառասուն

եղբայրներ հաւաքուելով, երբէք չսկիտի կարողանաք գէթ կիսով չափ արտայայտել... Ո՛չ, պարոն, ներեցէք, իմ գոյութիւնս խեղկատակութիւնների և միմտութիւնների համար չէ... Բողոքելով բողոքում եմ այդ բարբարոսութեան դէմ:

Սեղրակեան. Շատ եմ զարմանում, տիկին, որ դուք այդպէս զայրանում էք... Ձեմ հասկանում, թէ ինչ դատապարտելի բան կայ... Ի՞նչ քանակ էք խօսում, կարծես թէ ես պատրաստում եմ մի ոճրագործութիւն անելու... Ի՛նչ կը լինի, եթէ մի անգամ ձեզ աղամարդ ներկայացնէ...

Մարգարիտ. Ի՛նչ կը լինի... Սրբապղծութիւն և յանցանք կը լինի, պարոն, Ի՞նչ մտանում էք, որ Աստուծոյ ստեղծած գեղեցիկ սեռը մենք ենք և ոչ թէ դուք: Ինչպէս մենք չենք կարող ձեր տեղը բռնել և ձեր դերը կատարել, այնպէս էլ դուք չէք կարող մեզ փոխարինել: Մարդիկ գեղեցիկ սեռը, դուք անարդում էք բնութիւնը, մեղանչում էք բնութեան օրէնքների, հասարակութեան և Աստուծոյ դէմ, որովհետև որոշ չափով դուք խախտում էք բարոյական օրէնքները: Բնութիւնը աստուածային իմաստութիւնն է և արուեստը, իսկ մարդկային արուեստը, որչափ միայն հնարաւոր է, աշխատում է մօտենալ բնութեան, հետևաբար և ամեն մի արուեստ, ի միջի որոց և թատերականը, այսպէս ասած, Աստուծոյ թողն է հանդիսանում: Մարդկային արուեստը, մօտենալով բնականին, միշտ կեղծիքի կնիք է կրում և մանաւանդ թատերականը: Արդ դուք ծառայելով արուեստին, դիմում էք հակաբնական միջոցի, որով աւելացնում էք կեղծիքը և մեղանչում էք ամեն բանի դէմ:

Սեղրակեան. Այսօր ես ձեզ ճանաչել չեմ կարողանում, տիկին: Ինչո՞ւ էք այդչափ յուզում, միթէ ես ձեզ վիրաւորեցի՞...

Մարգարիտ. Ձէք ճանաչել, որովհետև կանացի պատիւս էք վիրաւորում, այն հարստութիւնը, որ բնութիւնն է ինձ պարգևել: Ո՛չ, բարեկամ, չմտածէք անգամ, որ երբ և իցէ հաւանութիւնս կը տամ, որովհետև դուք նման էք այն մարդուն, որ՝ կամենալով աճեցնել իւր հարստութիւնը՝ բնական ճանապարհները թողած, կողմնակի արուեստների՝ վաշխառութեան է դիմում և հետևաբար բնական օրէնքների դէմ մեղանչում:

Սեղրակեան. Հաւատացնում եմ ձեզ, տիկին, որ իմ խաղից դուք շատ գոհ կը մնաք: Ամեն ինչ կը յարմարեցնեմ ձեր սեռին և ցոյց կը տամ, թէ յանձին ձեր ինչպէս լաւ եմ ըմբռնում գեղեցիկ սեռի հոգեկան աշխարհը...

Մարգարիտ խնդրեմ, ներուժիւն մի քաչք ինձ հաւատացնելու թէպէտ մարդիկ սովոր են ինձ վերայ ուրիշ աչքով նայելու, սակայն տակաւին բարոյապէս ես այնչափ ընկած չեմ, որ կանացիութիւնս խաղի ու խայտառակութեան մատնեմ: Սա կին եմ, կին էլ կամենում եմ մնալ: Անշուշտ, մենք թոյլ, անպաշտպան արարածներ ենք. իմացած եղէք, որ եթէ այդ քայլն անէք, դա բռնազրօսութիւն կը լինի, որի դէմ արդարութեան ձայնը կը բողոքէ: Ներեցէք, պարոն, ես այժմ պիտի զնամ, փորձ ունինք:

(Սեղրակեանը ապշած մնում է):

(Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր)

ԱՊՕԹԵՕՋ

Թիֆլիզի հայ դերասանական խումբը ներկայացնում է Դիւմայի «Կամելիազարդ տիկինը» մասնակցութեամբ Սեղրակեան դերասանի, որ կատարում է Մարգարիտ Գօթիէի դերը: Թատրոնը համարեա թէ լի էր: Հանդիսականները խումբ խումբ բաժանուած տաք տաք վիճարանում են: Ոմանք պաշտպանում են նորան, իսկ մեծամասնութիւնը դատապարտում է այդ քայլը: Ընդհանրապէս հանդիսականների տրամադրութիւնը վրդովուած և յուզուած է: Մարգարիտ Գօթիէի ընդ դուրս գալը մի խումբ մարդկանց կողմից սուլոցով ընդունուեցաւ, իսկ երբ սկսեց իւր դերը կատարել, դժգոհութիւնն աւելի ևս սաստկացաւ. ծիծաղում էին, սրախօսութիւններ անում Սեղրակեանի հասցէին, շուացնում էին և մինչև անգամ անվայել խօսքեր արտասանում: Գործողութիւնը չլերջացած՝ դժգոհութիւնը իւր գագաթնակէտին հասաւ. բեմ սկսեցին թռչել գետնախնձորներ, թթու վարունգներ, փթած խնձորներ և այլն... Ակամայ վարագոյրը ցած թողին: Ֆիգարօն մի անկիւնում կանգնած քթի տակին ծիծաղում է: Բեմ է դուրս գալիս դերասաններից մէկը և յայտնում, որ Սեղրակեանի հիւանդութեան պատճառով ներկայացումը չի կայանալ. ցանկացողները կարող են ներկայացնել տոմսակները և փողը յետ ստանալ... Մեծ իրարանցում, աղաղակ և գոռում-գոչիւն:

1901 թ. Նոյեմբերի 21-ին

Թիֆլիս:

ՖԻԳԱՐՕ